Կնքված պայմանագրերի մասին հայտարարություն

«Մայմեխ Ռիզորթ» հանգստի և ժամանցի գոտու սպասարկող արտաքին ինժեներական ենթակառուցվածքների կառուցում
TUR-PPI-04

Ծրագրի անվանում՝ Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման
Երկիր՝ Հայաստան
Ծրագրի համար՝ P150327
Շնորհված ընկերություն՝ «ԽԱՉՄԻՇՇԻՆ» ՍՊԸ
Հասցե՝ Տավուշի մարզ, ք. Իջևան, Նալբանդյան 1/5
Քաղաք/Մարզ՝ Իջևան
Երկիր՝ Հայաստանի Հանրապետություն
Պատվիրատու՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ /ՀՏԶՀ/
Պայմանագրի կնքման ամսաթիվ՝ 12 դեկտեմբեր 2023թ.
Գնման ընթացակարգի եղանակ՝ «Ազգային մրցակցային մրցույթ»
Պայմանագրի գումար՝ 33,251,236 (երեսուներեք միլիոն երկու հարյուր հիսունմեկ հազար երկու հարյուր երեսունվեց) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ:

Տևողությունը՝ շինարարական աշխատանքների մեկնարկից մինչև ավարտը, նախատեսվում է՝ *90 օր*

Պայմանագրի շրջանակը.

Ավտոկայանատեղի

Ասֆալտե ծածկույթով ավտոկայանատեղին նախատեսվում է կառուցել հանգստի և ժամանցի գոտու գլխավոր մուտքի մոտ՝ համայնքապատկան տարածքում: Ավտոկայանատեղիի մակերեսը կազմում է մոտ 643 քմ:

Մոտեցնող ճանապարհ

Ասֆալտե ծածկույթով մոտեցնող ճանապարհը ընկած է ավտոկայանտեղիի և հանգստի և ժամանցի գոտու տարածք տանող աստիճանների ստորին հարթակի միջև: Մոտեցնող ճանապարհի երկարությունը կազմում է մոտ 41 մ, իսկ մակերեսը մոտ 208 քմ:

Քայլուղի

Ավտոկայանտեղիի և հանգստի և ժամանցի գոտու տարածք տանող աստիճանների ստորին հարթակի միջև նախատեսված է կառուցել բնական քարերով սալարկված քայլուղի: Քայլուղու երկարությունը կազմում է մոտ 31 մ, իսկ մակերեսը մոտ 54 քմ:

Ջրամատակարարման համակարգ

Հանգստի և ժամանցի գոտու ջրամատակարարումը ապահովելու համար նախատեսվում է կառուցել 68 մ երկարությամբ DN40 մմ տրամագծով պոլիէթիլենե խողովակաշար, որը միացվելու է Հակոբյան փողոցով անցնող DN280 մմ տրամագծով ջրատարին: Միացման կետում տեղադրվելու է 280x90 մմ եռաբաշխիչ, որից հետո տեղադրվելու է ստորգետնյա հակահրդեհային հիդրանտ՝ ճանապարհային թուջե խցանով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործող DN280 մմ տրամագծով ջրատարում առկա ճնշումը չի գերազանցում 1.5 մթն, կառուցվող խողովակաշարը համալված է QMAX=2.4 մ3/ժ, H=40 մ սնող պոմպով՝ ներառյալ ավտոմատ միացման և անջատման համակարգը: Պոմպը տեղադրվելու է 1000 մմ տրամագծով ե/բ հորում, որը նախատեսված է կառուցել հանգստի և ժամանցի գոտի տանող աստիճանների ստորին հարթակին կից տարածքում: Պոմպի ե/բ հորին կից կառուցվելու է մեկ այլ 1000 մմ տրամագծով ե/բ հոր, որտեղ նախատեսված է տեղադրել ջրաչափական հանգույցը:

Կեղտաջրերի հեռացման համակարգ

Հանգստի և ժամանցի գոտու կեղտաջրերի հեռացումը կազմակերպելու համար նախատեսվում է կառուցել մոտ 403 մ երկարությամբ DN200 մմ տրամագծով պոլիէթիլենե խողովակաշար, որը միացվելու է Հակոբյան փողոցով անցնող DN250 մմ կոյուղագծին: Կառուցվող կոյուղագծի երկայնքով՝ նախագծով նախատեսված տեղերում տեղադրվելու են 11 հատ 1000 մմ տրամագծով ե/բ դիտահոր: Կոյուղագծի վերջնակետում տեղադրվող դիտահորը կառուցվելու է հանգստի և ժամանցի գոտի տանող աստիճանների ստորին հարթակին կից տարածքում: